Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 12

ՓՄՁ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

19.10.2022 թ. ժ. 11:00 ՀՀ էկոնոմիկայի նախարարության կոլեգիայի դահլիճ

Քաղաք Երևան

Մասնակցում էին՝

Ենթախորհրդի անդամներ

Ռաֆայել Գևորգյան	Էկոնոմիկայի նախարարի տեղակալ՝ ՓՄՁ զարգացման խորհրդի քարտուղար
Անդրանիկ Ալեքսանյան	Երևան քաղաքի առևտրաարդյունաբերական պալատ
Էդիկ Կիրակոսյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն
Լուսինե Մնացականյան	Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում (ԱԱՊՀ)
Էդուարդ Բաղալյան	Քաղաքացի-հարկատու-բիզնես իրավապաշտպան կազմակերպություն (ՔՀԲԻԿ)
Տիգրան Կարապետյան	«Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիա» ՀԿ

ՀՐԱՎԻՐՎԱԾ ԱՆՁԻՔ

Ժորա Սարգսյան	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Աննա Իվանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) տարածքային կառավարման վարչության պետ
Անահիտ Մկրտչյան	Զբոսաշրջության կոմիտե
Լեռնիկ Հարությունյան	Պետական եկամուտների կոմիտե (ՊԵԿ)

Գայանե Դալլաքյան	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության առաքելություն (USAID)

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Լիլիթ Հակոբյան	Էկոնոմիկայի նախարարություն ձեռներեցության վարչության պետ
Հռիփսիմե Հովհաննիսյան	Էկոնոմիկայի նախարարություն ձեռներեցության վարչության պետություն-մասնավոր երկխոսության բաժնի պետ
Թամարա Սարգսյան	Էկոնոմիկայի նախարարություն ձեռներեցության վարչության փորձագետ
Վահե Մխիթարյան	Էկոնոմիկայի նախարարություն ձեռներեցության վարչության պետություն-մասնավոր երկխոսության բաժնի ավագ մասնագետ
Հովսեփ Պատվականյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի (ՀՆԽ) ղեկավար
Հայկ Մալխասյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու
Դավիթ Աղաջանյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ
Ռուբեն Սարուխանյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի տնտեսագետ, տնտեսագետ
Հասմիկ Սողոմոնյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի հանրային կապերի պատասխանատու

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՐՑ 1. Ռազմական գործողությունների հետևանքով տուժած որոշ համայնքների հյուրընկալության ոլորտի տնտեսավարողների աջակցության ծրագիր

Առաջարկվում է Վայոց Ձոր և Գեղարքունիքի մարզերում գտնվող և գործունեություն ծավալող մասնավոր հատվածի տուժած ոլորտների տնտեսվարողներին, վարձու աշխատողներին և քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողներին տրամադրել

համապատասխանաբար տարեկան շրջանառության 10% չափով միանվագ փոխհատուցում, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի չափով միանվագ փոխհատուցում:

ՀԱՐՑ 2. Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում զբոսաշրջության խթանման հնարավոր միջոցառումներ:

Առաջարկվում է առաջարկվում է ներդնել խթանող կարգավորումներ՝ հյուրանոցային ծառայությունների գնի փոխհատուցման միջոցովՍյունիք և Վայոց Ձորի մարզերի զբոսաշրջային հոսքերը ակտիվացնելու նպատակով:

ՀԱՐՑ 3. Աշխատանքային օրենսգրքում հեռավար աշխատանքին վերաբերող կարգավորումների սահմանում

Առաջարկվում է կանոնակարգել հեռավար և համակցված աշխատանքին բնորոշ գործատու-աշխատող հարաբերությունները՝ առաջնորդվելով հնարավորինս ազատական մոտեցումներով:

ՀԱՐՑ 4. Առևտրի իրականացման վայրերի ու առևտրի կենտրոնների կազմակերպիչների և դրանցում աշխատողների՝ վարձակալների միջև հարաբերությունների, մասնավորապես պայմանագրային հարաբերությունների կարգավորում:

Հարցը ծագել է Սուրմալու տոնավաճառի հրդեհից հետո առաջ եկած խնդիրների համատեքստում:

Առաջարկվում է մի շարք փոփոխություններ անել քաղաքացիական օրենսգրքոում և առևտրի և ծառայությունների մասին օրենքում:

Նիստի բացմանը ողջույնի խոսքով հանդես եկավ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը: Պարոն Գևորգյանը ՓՄՁ զարգացման խորհրդի անդամ հանդիսացող մասնավոր հատվածի ներկայացուցիչներին տեղեկացրեց, որ Խորհրդի աշխատանքները համակարգող Փոխվարչապետի կողմից արդեն իսկ հաստատվել է ՓՄՁ զարգացման խորհրդի նորընտիր անդամների կազմը և նշվածի կապակցությամբ շնորհակալություն հայտնեց նիստի մասնակից խորհրդի նախորդ կազմի անդամներին՝ խորհրդի շրջանակում վերջիններիս կատարած աշխատանքների և ոլորտի զարգացման հարցում ներդրած ջանքերի համար:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

ՀԱՐՑ 1. ՀՆԽ-ի ավագ տնտեսագետ Դավիթ Աղաջանյանի զեկուցմամբ ներկայացվեց, որ 2022 թվականի ռազմական գործողությունների հետևանքով Վայոց Ձոր և Գեղարքունիքի մարզերի թիրախային համայնքներում շատ տնտեսվարողներ ունեցել են գործունեության խափանում և/կամ հաճախորդների թվի կտրուկ անկում, ինչի պատճառով անհրաժեշտություն է առաջացել իրականացնել տնտեսվարողների աջակցության միջոցառում: Մասնավորապես, նախնականորեն ձևավորված մոտեցման համաձայն, առաջարկվում է Վայոց Ձոր և Գեղարքունիքի մարզերում գտնվող և գործունեություն ծավալող մասնավոր հատվածի տուժած ոլորտների տնտեսվարողներին, վարձու աշխատողներին և քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողներին տրամադրել համապատասխանաբար տարեկան շրջանառության 10% չափով միանվագ փոխհատուցում, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի չափով միանվագ փոխհատուցում: Չնայած այն հանգամանքին, որ նիստի մասնակիցները՝ ՊԵԿ ներկայացուցիչ Լեռնիկ Հարությունյանը, Էդուարդ Բաղալյանը և նիստի այլ մասնակիցներ կողմ արտահայտվեցին նշյալ մարզերում նման ծրագրի իրականացման վերաբերյալ, վերջիններս ներկայացրեցին ծրագրի, առավել թիրախային իրականացման հնարավոր խոչընդոտների մասով իրենց դիտարկումները:

Քննարկման ընթացքում նշվեցին տեսակետներ նաև՝ հնարավոր շահառուների շրջանակի վերաբերյալ տեղեկատվության բացակայության վերաբերյալ: ՏԿԵՆ ներկայացուցիչ տիկին Իվանյանը հայտնեց ՏԿԵՆ պատրաստակամությունը՝ անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման հարցում աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ, միաժամանակ վերջինս նաև ճշգրտումներ արեց տուժած մարզերի համայնքների հետ կապված:

ՈՐՈՇՎԵՑ

Միջոցառման ծախսերի գնահատման և հասցեականությունն ապահովելու նպատակով՝ դիմել ՊԵԿ–ին՝ տուժած համայնքներում փաստացի գործունեություն ծավալող (ոչ թե իրավաբանական հասցե ունեցող) տնտեսավարողներին նույնականացնելու համար Ջերմուկ համայնքում, Կութ, Սոթք և Ներքին Հանդ գյուղերում գրանցված հսկիչ դրամարկղային մեքենա շահագործող հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով, մասնավորապես հարկ վճարողների, վերջիններիս վարձու աշխատողների թվաքանակ (այդ

թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատող), ընդհանուր հարկման դաշտում գործող հարկ վճարողների 2021թ. սեպտեմբերի իրացման շրջանառության և այլնի վերաբերյալ: Տեղեկատվության ստացումից հետո, ՀՆԽ–ի կողմից նախագիծը կլրամշակվի առկա կարծիքների դիտարկմամբ և կներկայացվի Էկոնոմիկայի նախարարությանը՝ համապատասխան գերատեսչությունների քննարկումներ կազմակերպելու նպատակով:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

ՀԱՐՑ 2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին ամիսներին նվազել են ներքին և արտաքին զբոսաշրջային հոսքերը Վայոց Ձորի և Սյունիքի մարզեր, առաջարկվում է իրականացնել թիրախային տնտեսվարողների աջակցության միջոցառում: Առաջարկվում է ստեղծել աջակցության մեխանիզմ, որի շրջանակում կխրախուսվեն այն կազմակերպությունները, որոնք իրենց ոչ պաշտոնական և/ կամ պաշտոնական հանդիպումների համար, հինգ և ավելի աշխատակցից ավել կազմով կնախընտրեն օգտվել Վայող Ձորի և Սյունիքի հյուրընկալության ոլորտի տնտեսվարողների կողմից մատուցած ծառայություններից: Մասնավորապես՝ նախատեսվում է շահառուներին տրամադրել փոխահատուցում՝ տնտեսավարողներից Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում գործող հյուրանոցային տնտեսության օբյեկտներում գիշերակացի և նվազագույն հյուրանոցային ծառայություններ ձեռք բերման գնի երեսուն տոկոսի չափով, բայց ոչ ավելի քան սույն միջոցառմամբ սահմանված առավելագույն գումարը:

Քննարկվող հարցի համատեքստում Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը ներկայացրեց Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված և ներկայումս քննարկման փուլում գտնվող «Մասնագիտական կարողությունների զարգացում» միջոցառումը, որի նպատակն է նպաստել կազմակերպությունների արտադրողականության աճին, աշխատաշուկայում առկա և ապագա մասնագետների որակավորման բարձրացմանը, երիտասարդների գործազրկության մակարդակի նվազեցմանը և ապագայում կանխատեսվող աշխատանքային պահանջներին համապատասխան գիտելիքների և հմտությունների զարգացմանը և համաշխարհային առաջադեմ գիտելիքի հասանելիության զանգվածային ապահովմանը՝ որակավորված դասընթացների մասնակցության վճարների փոխհատուցման միջոցով:

ՈՐՈՇՎԵՑ

ՀՆԽ–ի կողմից նախագիծը կլրամշակվի առկա կարծիքների դիտարկմամբ և կներկայացվի համապատասխան գերատեսչությունների քննարկմանը: Որոշվեց հարցը քննարկել նաև Սոցիալական հարցերի և աշխատանքի նախարարության հետ, համապատասխան նպաստներին համակարգին այլընտրանք տա այն ռազմավարական փաստաթղթերի, կարճաժամկետ և երկարաժամկետ զբաղվածության ծրագրերի հետ համապատասխանեցնելու նպատակով:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

ՀԱՐՑ 3. ՀՆԽ ղեկավար Հայկ Մալխասյանի զեկուցմամբ ներկայացվեց Աշխատանքային օրենսգրքում հեռավար աշխատանքին վերաբերող կարգավորումների ներդրմամբ ԱՕ նախագիծը:

Օրենսգրքի գործող կարգավորումը նախատեսում է հեռավար աշխատանքի հնարավորություն միայն տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում: Օրենսգիրքը կարգավորում է նաև տնաշխատների հետ աշխատանքային հարաբերությունները: Նշված երկու դեպքերն էլ չեն նախատեսում ներկայումս լայնորեն կիրառվող հեռավար աշխատանքի հնարավորություններ, ինչը խնդիրներ է առաջացնում տնտեսավարողների համար: Նախագծի մշակումը պայմանավորված էր վերջին տարիներին առաջ եկած մարտահրավերներով և նաև միջազգայում պրակտիկայի ներդրման անհրաժեշտությամբ:

Հարցի վերաբերյալ զեկուցեց նաև ԱՍՀՆ ներկայացուցիչ Ժորա Սարգսյանը՝ ներկայացնելով նախագծի հետ կապված լրացուցիչ տեղեկատվություն, համաձայն որի առաջարկվում է կանոնակարգել հեռավար և համակցված աշխատանքին բնորոշ գործատու-աշխատող հարաբերությունները՝ առաջնորդվելով հնարավորինս ազատական մոտեցումներով:

Նախագծի իրականացման տեսանկյունից իր դիտարկումները ներկայացրեց ՊԵԿ ներկայացուցիչ Լեոնիկ Հարությունյանը, մասնավորապես կապված գործատու–աշխատող փոխհարաբերություններին, հեռավար աշխատանքի ապահովման հետ կապված գործատուի լրացուցիչ ծախսերի առաջ գալու հետ կապված և այլ խնդիրներին: Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները ներկայացրեցին նաև Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել

Գևորգյանը, ԱԱՊՀ–ը ներկայացնող Լուսինե Մնացականյանը և այլոք, նշելով հեռավար և համակցված աշխատանքային հարաբերությունների ներմուծման անհրաժեշտությունը:

ՈՐՈՇՎԵՑ

ՀՆԽ–ի ղեկավար Հովսեփ Պատվականյանի առաջարկությամբ որոշվեց լրամշակել նախագիծը՝ կոնցեսուսային մոտեցումների ամրագրմամբ:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

Հարց 4. Առևտրի իրականացման վայրերի ու առևտրի կենտրոնների կազմակերպիչների և դրանցում աշխատողների՝ վարձակալների միջև հարաբերությունների, մասնավորապես պայմանագրային հարաբերությունների կարգավորում

ՔՀԲԻԿ–ն ներկայացնող Էդուարդ Բադալյանի զեկուցմամբ ներկայացված հարցը: Մասնավորապես ներկայացվեց, որ հարցը ծագել է Սուրմալու տոնավաճառի հրդեհից հետո, երբ փոխհատուցումների հետ կապված հարցերի քննարկումների ընթացքում պարզվեց, որ վերջիններս՝ վարձակալները նույնիսկ արտակարգ իրավիճակի պայմաններում պարտավոր են պայմանագրով սահմանված վարձավճարները վճարել: Քննարկումների արդյունքներով մատնանշվեց, որ դիտարկվող հանգամանքներում հարցը գտնվում է մասնավոր գործընկերության իրավասության հարթությունում և ենթակա է կարգավորման՝ վարձակալական պայմանագրերի շրջանակներում:

ՈՐՈՇՎԵՑ

Հարցին անդրադառնալ քաղաքացիական օրենսգրքի և առևտրի և ծառայությունների մասին օրենքի փոփոխությունների համատեքստում: Մատնանշվեց, որ անհրաժեշտ է ներմուծել այնպիսի կարգավորումներ, որ տնտեսվարողները՝ և մոտիվացված լինեն աշխատել առավել թափանցիկ և տնտեսական գործունեության կարգավորման օրենսդրության շրջանակներում:

Նիստը նախագահող

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

_____

(ստորագրություն)

Արձանագրությունը կազմեց՝

ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՊՄԵ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ՀՌԻՓՍԻՄԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ